

16301

891-99

7-89

Այս աշխատ և ժամանակ  
ու աշխատ յաջականց  
են են  
ՊԵՐԾ ՊՈՅՈՏԵԱՆՑ 13.

(200)

Մ Ե Բ Ռ Ի Հ Ի Պ Պ Օ Ւ

Զ Ր Ա Ջ

XL.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպ. Կ. Մարտիրոսյան.  
Օբելիանովսկաձ. հ. № 12.

1899

89

20 02

386

2/39

891.99

9-89  
u~

ԳԵՐՃ ՊՈՅԵՎԱՆԻՑ

36986

ՄԵՐ ԽԵՂՉՈՒ

Զբաց

XL.

ԺԻԳԻՆ

Տպ. Կ. Մարտիրոսյանց. || Տպ. Կ. Մարտիրոսյանց.  
Օրբելյանովսկա պլ., ճ. № 1/2.

1899

3596

Дозволено цензурою, 30 Апрѣля 1899 г. Тифлисъ.

## ՄԵՐ ԽԵԶՈՆ



յօր է, որ մեր խեզօն կուչ  
է եկել, կծկուել, դառել  
մի տղաթեած հաւի  
ճուտ.. ու առաւօտեան  
գանգակի հետ տեղիցը.  
վեր է կենում, գնում  
սուրբ Պօղոս-Պետրոս ե-  
կեղեցու պատը համբուրում, երեսին երեք խաչ  
քաշում ու լնդլնգալով իրանց ալգու ճանա-  
պարհը բռնում, մինչև երեկոյ հնձանի կտերը  
նստում, ալգին պահում և իրիկները վերա-  
գառնում:

Ասա՞ մի մարդ սկի բեղի տակովն անց է  
կացնում էդ մի բռնցքաշափ զզգնած հալիւորին,  
կամ միտք անում է, թէ մի օր կար, որ ծա-  
նօթ, անծանօթ գտակ էին հանում, խէջօյին  
խոր գլուխ տալիս:

Խսպէս է աշխարհքիս բաները, իմ միս կըտ-  
րող թշնամին չը ծերանայ, ուժից չընկնի: Լաւն  
էն է՝ մարդս քանի կոներումը գորութիւն կայ ու  
ծնկներումն ոյժ, մինչև որ իր պատիւը տեղն է  
ու ջահէլների արհամարհանքին չի ենթարկուել,  
ջահէլների լեզուի տակ չի ընկել, ի՞ո պատուսվը  
մեռնի, աշխարհքի ափսոսալիքը դառնայ:

Ափսոս չէր, որ մեր խէջօն ծերացաւ:

Ասենք՝ ուղտը սատկի, սատկի՝ էլի կաշին  
մի լշարեռը կը լինի, մարդը թէկուզ ծերանայ,  
թէկուզ աղքատանայ, թէկուզ մեռնի, եթէ նա  
մի ժամանակ խելք ու հունար, շէնք ու շնորհք,  
մարդութիւն ու լաւութիւն ունեցիլ է, նրա  
անունը միշտ կը լիշուի, կը լիշատակուի:

Էս մի բանն է, որ մարդիս սրտին լուս է  
ու միտթարանք. էս էլ որ չը լինի, աշխարհքի  
մէջ ապրելը բոլորտին պէտքը չի:

Քիչ պատիւ է մեր խէջօյի համար, որ ինքն  
անցկենալուա՝ երեսին չեն մտիկ տալիս, բայց  
ետևիցն ականջն է ընկնում, որ ջահէլները  
մէկս մէկու փափսում են. «գիտես՝ սա ով է, սա  
խէջօն է, որ մի ժամանակ աշխարհք է դո-  
ղացրել:

— Սա, էս անցկենող ծերը, զարմացմամբ  
Հետաքրքրուում է խօսակիցը:

— Այս, էնց սա, էս պստիկ փտած մարդը,  
կաւելացնենք մենք, սա մեր խէջօն է, որին  
շատ լաւ լիշում են իր ժամանակակիցները, որի  
անունը սարսափ էր պարսկական, տաճկական  
և ուստական սահմանագլխների նահանգներումը:

Ճատ ու շատ են մեր խէջօյի գործերը,  
բայց մենք մտադիր չենք նրան իր կեանքի  
ամրողջ պատկերով ձեր առաջին տնկելու. բա-  
ւական է վերցնել նրա կեանքի անթիւ և ան-  
համար երևոյթներից ամենաաննշան դէպքեր  
և դուք կիմանաք, թէ ինչ մարդ էր, կամ ով  
էր մեր խէջօն:

— Ո՞վ էր. ով պէտք է լինէր, կը պատա-  
խանեն մեզ շատերը. ձեր խէջօն աւագակապետ

էր, անապատների ու ձորերի բնակիչ էր, ֆը-  
լան ու ֆստան գող թուրք բէզերի ընկեր էր:  
— Խօսքդ շաքարով կոտրենք մենք, մեր  
Խէջօն դաշտակտղուկ (չչէ՛տառահան) մարդակեր էր,  
արենխում էր. ուղիղ է ասածդ, Եղիկ աւազա-  
կալետը նրա արևովն էր երդում, լիշածդ  
բէգ ու բէզզադէքը նրա խօսքի մինն երկու չէին  
անում, քուրդ հասո աղէն նրա անունը լսելուս  
թանի քերեղանը բերնիցը վէրէր քցում, կոտրում:

Երբէք չեմ մոռանում ես մեր Խէջօյի երի-  
տանարդական պատկերը և նրա գեղեցիկ կաղ-  
մուածքը:

Սուտ է, թշնամու խօսք է, ով է ասում,  
թէ մեր Խէջօն աւազակապետ էր: Մարելում ու  
չոլերում քաշ եկող մարդն էնպէս նուրբ պատ-  
կեր կունենայ, արեի ու անձրւի, քամու ու  
խորշակի տակ ընկնողն էնքան քնքուշ գծա-  
դրութիւնի տէր կը լինի: Հէնց իմանաս շուաք-  
ներումն ապրած, դիւանատների փափուկ աթոռ-  
ների վրայ բազմած դատաւոր լինէր, որ երբէք  
կոշտ ու կոպիտ առարկաների ձեռք չի տուել,  
այլ միայն սազի փետուրն է մատների մէջ շա-

րունակ ճգճգացրել ու թղթերի երեսներ լցրել:  
Հաւատացէք ինձ, մեր Խէջօն իր անու-  
սում տեղովը, իր տաշուած ու կոկուած վար-  
մունքալը, իր անուշ լեզուովը, իր քաղցր մաս-  
լահաթներովն ու անկեղծ բարեկամութիւնովը  
ոչ թէ արենխում աւազակի էր նման, այլ սըլ-  
տակից եղբայր-տղայի, այլ գիտնական փիլիսո-  
փայի և ամենաքաղաքավարի ուսումնականի:  
Որ մարդի հետ կամաց-կամաց, ծանր-ծանր ժըպ-  
տալով խօսում չէր ու դատողութիւններ տալի,  
մարդ ուզում էր վեր թուչի ու էն պուշները  
համբուրի, որտեղից էդպէս անուշ խօսքեր են  
դուբս գալիս: Լեզու հօ չէր, որ բանացնում էր.  
քաղցրահամ ու անմահական կերակուր էր, որ  
քո ճաշակի բաց էր անում, քեզ կշտացնում,  
քեզ իր գլուխը սիրել տալիս: Անունդ տալիս՝  
մի էնպէս սրտալի «Ճան» էր հետը միացնում,  
որ ջանումդ նստում էր: Մեղք չի մեր Խէջօյին  
աւազակ ասելը. լնչ կար նրա մէջ աւազակի  
նմանութիւն, ոչ հասակն էր բարձր, ոչ գէմքն  
էր սոսկալ ու անձունի, ոչ կազմուածքն էր  
անտաշ: Միջահասակից էլի կարձ, բարակ ու

շիմշատ, պատիկ ու ճստիկ մի մարդ էր մեր Խէջօն. տեսնողը կասէր՝ մի ձեռքով վերցնեմ, եօթը սարի քամակը շպրտեմ։ Կը շպրտէր, բառ ինչ կանէր. մարմնական ոյժ չունէր մեր Խէջօն, 15 տարեկան պատանին նրա հետ կող պլծնելով, հետո ըմբշամարտի կպչելով՝ նրան զետնովը կտար, եթէ նրա կողքից կախած չը լինէր իր անբաժան եղբայր-արծաթապատ դաշոյնը։

Այդ ժամանակ՝ գլխից ձեռք քաշած մարդը պէտք է փորձէր մեր Խէջօյին բարկացնել, անխելք լիմարի վերջին արև տեսնելն էն օրը կը լինէր։ Հոգուս ծանր մեղք եմ անում. թէպէտ, ինչպէս մեր Խէջօն ինքն էլ այսօր վկայում է, 17 տարին մտնելու օրից մինչեւ 40-ը, իր մի ոտքը տանն է եղել, միւսը դուրսը, մի ձեռքին սուրն է եղել բռնած, միւս ձեռքին ձիու սանձը, մի գիշեր փափուկ անկողնում է պառկած եղել, տասը գիշերը եափունջու կէսը վերմակ, կէսը մահիճ է շինել, թէպէտ չոր քարն է փետրալից բարձին փոխարինել, բայց մեր Խէջօն իր կեանքումը անմեղ արիւն չի թափել։

Մի ժամանակ մեր աշխարհքն էս օրուայ նման հանգիստ չէր, որ չէր անցկենալ, որ ասպատակութիւնների, մարդասպանութիւնների և կողոպտումների ձայներ չը լսուէին, շաբաթ չէր լինում, որ երեք սահմանակից տէրութիւնների մէջ բանակցութիւններ չը ծագէր՝ երեք աշխարհքը խոռվող աւազակներին ոչնչացնելու մասին. բայց ինչ կանես, որ արած բոլոր փորձները նպատակի չը հասան։

Հնար կար միթէ մի յաջող ելքի գալը, կամէին քեզ ամէնքը, մինչ դեռ Խէջօյի խումբն էր աշխարհքն իրարոցով տուողը։ Խէջօն ինքն էր այս ինչ տեղում այն ինչ վաճառականին իր ձեռքով ոչխարի նման մորթողը։

Ո՛չ, անամօթ զրպարտանքներ ու սուտ բամբասանքներ են, որ մեր Խէջօյի շուաքի ետևից անում էին. էդ ձայները տարածողները միշտ իրանք երկչու ու կնատ հաւագողից ճամբայ կտրող դառած աւազակներն են եղել. կողոպտուածներին երկիւղ ազգելու համար՝ աւազակները Խէջօյի անունով են պարծեցել։ Ես չեմ ժխտում, մեր Խէջօն ինքն էլ չի

ուրանում, որ արիւններ թափել է: Իգի՛թ տը-  
ղամարդը, չօկերի աստուածը՝ թէ արիւն թա-  
փելու շնորհք չունենայ, մինչև իր ընկերների  
աչքի առաջին իր նման աշխարհք սասանաց-  
նողներից տասնաւորներին հաւի ձագերի պէս  
մորթոտած չը լինի, նա կարող է խումբ կազ-  
մել, նա կը համարձակութիւն վիրու լիշածս արեն-  
կերների ընկերութեան զլուխը կանգնել. Էն էլ  
ինքը մի հայ, տասը թուրքի խանդատէք ու  
բէզզատէք:

Այո՛, այո՛, մեր Խէջօն արիւն թափել է,  
բայց ոչ թէ աստուածասէր ու խաղաղասէր ժո-  
ղովրդի արիւնն է թափել. նա ուրիշ տեսակ  
մարդկանց հոգէառն ու թշնամին էր. ընդ հա-  
կառակն աշխատասէր գիւղացիք ու բարի քա-  
ղաքացիք միշտ նրան կեանք ու արևշատու-  
թիւն էին խնդրում, նրան օրհնում, օրհնա-  
բանում էին:

Մի օր կար՝ զլուխը մի տոխ էր, իրիկունը  
մթնեց՝ չէիր վստահանում հարեանիդ տունը  
ճրագլուխի գնալ, շատ անդամ արտդ մնում էր  
Հէձելու, այդիդ փորելու, բար ու բարաքաթդ

տուն ածելու, որովհետեւ առաջգետը (ժամա-  
նակ) փուչ էր, քչիցը՝ օրական հինդ արիւնի  
ձէն էիր լսում, էստեղ տուին, տարան, էնտեղ  
կողոպտեցին, միւս տեղն ընկեր-հարեանիդ լս-  
պանեցին:

Էղ անապահով վայ ու վայնասունի օրերը  
նոր չէին, վաղուց էին անցկացել, հիմի ուկին  
ովոր (ափսէ) գլխիդ դիր, ճամբայ ընկիր, ոչով  
քո իշին չօշ չի ասիլ: Էդ լուր-մուր-մուլը,  
էդ վտանգներն էն ժամանակներն էին, որ դեռ  
մեր Խէջօն լրյա չէր ընկել: Մեր Խէջօյի անունը  
գուրս եկած օրից՝ էս օր լսում էիր, թէ ֆլան  
աւազակապետն է եղել սպանուած, դաշտումը  
քցած, էգուց՝ միւսն է բռնուած, ոտերը բխու-  
ված, (պրկած), բերդ դրած. մի քանի ամսումը  
ջնջուեցին ոչնչացան, հոտները կտրուեց: Ճա-  
տերն իրանց ոտովն եկան, երկրի գտաւորի  
ծնկներն ընկան, մեղայ եկան, որ էլ այսուհետեւ  
հարամութիւն չեն անիլ ու իրաւունք առան,  
գնացին իրանց հօր արհեստը բանացրին, իրանց  
արևի ձէնն ածեցին:

Բայց էդ դարձ եկողներն էլ չը մոռա

բաց-աշկեարայ երկրի տէրերին խոստովանուել,  
որ նրանց մօտ գալուց յառաջ՝ իրանք խէջօյին  
են խօսք տուել, որ աւազակութիւնը թողան:

Արի՞ ու խօսք մի տալ, մեր խէջօյի պարբե  
տեսել էին, վաղի առակի պէս՝ գայի աչքերն  
էին աղուէսին վարպետ շինել:

Խէջօյի էդ ազնիւ գործերն էին, որ նրա  
էհտիբարը (վարկ) երկրի կառավարիչների մօտ  
բարձրացրել էին. էս ու էն մեծամեծների տներն  
էնպէս համարձակ ել ու մուտ կանէր, նրանց  
հետ ծնկնէծունկ կը նստէր, ոնց որ դու քո  
ազիդ սիրեկան բարեկամի մօտ կը մտնես:

Մեր ասածիցն էն է դուրս գալիս, որ մեր  
խէջօն միայն աւազակներ զսպող է եղել, ուրիշ  
ոչինչ սխալմունք չի արել, կամ արիւններ չի  
թափել:

— Զէ, էսպէս վկայելով մենք Աստծուն  
խաբած կը լինինք. հալալ մարդն էնպէս ըն-  
կերներ չէր ունենալ. մեր խէջօյի էս օրուայ  
ընկերները մի օր իրա սպանուած աւազակների  
խմբապետներն էին ու հիմի իրանք են մտել  
խէջօյի պէս պստիկ հայի բուռն ու հաւատարիմ

որսկան թազու պէս՝ աչքներն իրենց տիրոջ  
երեսին քցած՝ նրա հրամանին են սպասում  
որսի քամակիցն ընկնելու:

Ուրեմն մեր խէջօն կատարեալ ճանապարհ  
կտրող աւազակների ընկերն ու զլիսաւորն էր,  
և էդպէս էր:

Բացի աւազակներից, ասեցինք՝ մեր խէջօյի  
սուրը շատերի սրտումն է ցցուել: Այս, շատ  
հարուստների ոսկիք խէջօյի փորումը հալուել են:

Որտեղ աղքատի բերանից պատառ իւլող,  
շահի շահ առնող, ժլատ հայ ու թուրք կային,  
ինչտեղ իրանց ռահաթին զլկող, նեղացնող  
կալուածատէրեր լինէին, ինչտեղ հոգիքը գաղի  
ծէրին չափող բազազներ, կշեռքում հարամու-  
թիւն անող հացածախներ կային, բոլորը կամ  
ուղղուում, աստուածավախ, ճշմարիտ, ողորմած  
ու աղքատասէր էին դառնում, կամ թէ կեան-  
քըները լորի պոչի պէս կարձանում էր, դժոխքի  
բաժին էին լինում: Մեր խէջօն իր ձեռքով էր  
էդպէսներին գնդակախորով անում, կամ վզերը  
կարմիր թել կապում (մորթել):

Չենք կարող ուրանալ, որ մեր աշխարհքի

ամէն մի քարայրն ու ձորերը յայտնի էին մեր  
Խէջօխն, բայց էս էլ ասեցինք, որ տարուան  
մեծ մասը նրա մի ոտը Յօմանցուի հողումն էր,  
միւսը Ղզլբաշի: Ղարս ու Վրպրումի սարերը,  
Թաւրիզի, Խոյի ու Սալմաստի ձորերը մեր Խէ-  
ջօն իր հօր տան քունջ ու պուճախի պէս գիտէր:

Էս որ կըլսէիր, թէ Խորասանու ճանա-  
պարհից մի ուղտի կարաւան՝ ոնց որ մի ասեղ՝  
մի օրումն անյայտացել է, էգուց ձէն վեր կը  
լինէր, թէ Արզրումի ու Բայազիդի մէջ տեղը  
այս ինչ հայ, կամ տաճիկ վաճառականի ապ-  
րանքի բեռները ցրիւ են տուած. երրորդ օրը  
կըպատմուէր, որ Թիֆլիզու և Երևանի ճանա-  
պարհից հրադէց Մարտիրոսի ապրանքը բերող  
ֆուրգունները դատարկ են յետ եկել ու ապրան-  
քի փոխարէն տեղական վարչութիւնների վկա-  
յութիւնն են բերել, որ ֆուրգունների բեռներն  
աւազակների խաչով են խաչուել:

Եթէ էս լուրերի հետ լսեցիր, որ ապրանքը  
կողոպտելուս ոչ մի սալորդ, կամ քրէհտար չե-  
սպանուել, կամ թէ տեսնում ես, որ ամէնքը  
ցաւում են, թէ ընչի ապրանքների հետ իրանց

անաստուած ու անխղճմտանք տէրերն էլ չեն  
սպանուած, իմացիր, որ էդ բոլոր կողոպտում-  
ները մեր Խէջօխի իր գործն է. Խէջօն վատ  
մարդկանց Գաբրել-Մուքէլն էր:

Մի անգամ մեր Խէջօն իր խմբովը մի գլ-  
շիր Ղըղլբաշի հողումը՝ Ղարագաղի մի մեծ գիւ-  
ղում ուզում է մի երկու ժամ հանգստանալ,  
ձիանոնց ու իրանց փորերը կշտացնել ու ճա-  
նապարհ ընկնել: Թուրքի գիւղ է լինում:

Արի տես, որ էդ ահազին շէն ու շէնլիկումը  
մի կտոր ցորենի հաց և մի բուռը գարի չի ճար-  
ուել. Էս ու էն տներից ժողոված, մի շաբթէն թը-  
խած չոր կորեկի ճաթ են զիել նրանց առաջը-  
պանքի, իւղի, թանի, ձուի անունն էլ մի տալ:

Մեր Խէջօն չի հաւատացել. գիւղ լինի ու  
հաւ ու ճիվ, կով ու կթան չըլինի, վարուցան-  
քի տէր լինիս՝ ու մի բուռը ցորեն, կամ գարի  
չունենաս:

Խէջօն վեր է կացել կէս գիշերին՝ իր սրի  
զուռով՝ գիւղի մի ծալրից մտել, միւսից դուրս  
եկել, տուն, տեղ, գոմ, ծակ—ծուկ չի թողել՝  
ճրագով տակն ու վրայ է արել:

Իմ արենկեր թշնամուն Աստուած ոչ հանդիպեցնի՝ ինչ նրանք են տեսել. քաղցածութիւնը, մերկութիւնը, դառն աղքատութիւնը համահաւասար բռնած է եղել գիւղը. տնաքանդի թուրքերը մի մի փալաս չեն ունեցել, որ տակները քցեն, խոտերի վրայ են եղել անատունների պէս վէր թափուած. ողջ գիւղը կրակ տայիր, քիթդ շորահոտ չէր առնիլ, մի մի պըղինձ չեն ունեցել, որ բայրամի օրերը գոնեկրակին դնէին:

Խէջօն հարց ու խնդիր է եղել, պատճառն իմացել, որ էդ ջրատարների տարուան բոլոր աշխատանքը մտնում է գիւղի կալուածատէր խանի փորը, մզում ու քամում է եղել անիրաւն իւր ռահաթին:

— Են օրուանից՝ որ մեծ խանն իր հօրը թաղեց, էն օրուանից մեր աստղը խաւարեց, պատմել են գիւղացիք. սրա հօր կենդանութեան ժամանակ՝ ձեզ նման աղայ մարդիկ օրական 100-ը դային, թագաւորավայել պատիւ կստանային գիւղումը, ինչ արած, մենք էլ ուրախ չենք, որ ձեր հրամանոց մօտ սւերես ենք մնում:

1000  
36585

— Զեր խանի մահից յետոյ գիւղն ումն է մնալու, հարցնում է մեր խէջօն գիւղացիներից:

— Ո՞ւր էր, աղայ ջան, Աստուած բերանիցդ լսէր, մեծ խանի հոգին առնէր, փոքր եղբայրը մի պատուական մարդ է, եթէ բայրամների ժամանակ (տօն) չորաթանի կամ բրնձի համ տեսնում ենք, փոքր խանի ողորմութիւնիցն է. եղբօրիցը թաղուն ամէն տուն ուղարկում է:

— Որ էղակէս է, այսուհետև շատ բայրամներ կունենաք, ու երբ բայրամի օրը նամազ անելուու կը լինէք, ձեր բայրամ տուողի համար էլ աղօթք արէք, ասում է խէջօն:

Եթէ հետևեալ առաւօտն այն գիւղը մըտնէիր, կը կարծէիր, թէ Նովրուզ-Բայրամն է, գիւղացիք բոլոր, մէր ու մանուկ հաւաքուած են խանի ամարաթի առաջն և ուրախ ուրախ փառք են տալիս Աստծուն: Ինչ է՝ թէ էս գիւշեր գողերն իրանց մեծ խանին միջից չորս կտոր են արել ու տանից մի ասեղ չեն տարել:

Մեր խէջօն իր ձեռքովն է մեծ խանի գըլուխը կտրել, խէջօյի ընկերներն են խանին կտոր կտոր արել:

Մի ժամանակ կար, որ մեր երկրի գործ ածած  
մովեղէնը (մետաքսեղէն) Վղլբաշից, իսկ միւս խա-  
սեղէնը (կերպաս) Օսմանլուից էր գալիս: Թրսից  
եկած ապրանքների վրայ մեծ մաքս էր դրած: Մեծ  
հսկողութիւն կար կարգուած, զէնքերի մէջ կո-  
րած պահապաններ ու կանոնաւոր դադախներ մօտ  
է մօտ կայարաններում անքուն սպասում էին. մի  
քանի տեղ մաքսատներ էին բացուած, բայց շու-  
կաներումն արգելուած ապրանքը հաճարձակ  
ծախւում էր:

Մաքսանենգների շնորհքն էր այս, իսկ  
ինչպէս ուրիշներն ասում էին, մեր Խէջօն ամե-  
նազլիսաւոր մաքսանենգն էր:

Բանաւոր պայման էր կապում նա վաճառա-  
կանի հետ և թուչում իր ոսկէգոյն Ղարաբաղի  
նժոյգ ձիու քամակը: Մի քանի օրից՝ տուած փողի  
արժէքով մետաքսեղէն, եւրոպական թանգարին  
խմբչներ, թէյ, շաքար, ինչ որ վաճառականի  
ծախելիքն էր, մի գիշեր նրա խանութն էր լրց-  
նում, իր վարձն առնում ու դնում ուրիշի հա-  
մար բերելու:

Միայն մեր Խէջօն չէր մաքսանենգութիւ-

նով պարապում, շատ քաջ մարդիկ էդ ճանա-  
պարհով հաց էին ուտում. բայց շատ շատերը  
միշտ չէին յաջողում. երբեմն նրանք ապրանքը  
դադախների ձեռքին էին թողնում, իրանք  
գլխներն ազատում. վախտ էլ գլխներն ապրան-  
քի հետ դադախներին էին բաշխում: Օր չէր անց  
կենալ, որ դադախները փախցրած ապրանք չը  
խըլէին, կամ մազսանենդներ չը բռնէին, բայց  
դադախներն ուրախ էին, որ տարուայ մէջ մի  
անգամ միայն կարողանան իրանց պարտքը  
կատարել, թաքըլի բռնուողը Խէջօն լինէր:

Կէջ', Կէջ', Երբ պէտք է մեր ճանգն  
ընկնի Կէջն, Տաշէնիկէ Կէջն, ախ էին քաշում  
դադախները: Դադախներն էլ մեղաւոր չէին, անի-  
րաւ Խէջօն խեղճերին ՛՛ էր պար ածում,  
դիւադաղար էր անում, ինչ խաղ ասես, որ նրանց  
զլուխ չը բերէր:

Իրան է յալտնի, թէ ինչպէս էր ապրանքը  
սահմանն անցկացնում, բայց երբ որ էնքան  
հեռացնում էր, որ ապահովուում էր, թէ էլ  
դադախի ձեռքը չի ընկնիլ, Խէջօն վերադառ-  
նում էր ու ձին քշում դէպի դադախները, ա-

տըրձանակն երեք անգամ կրակ տալիս ու փախչում: Գնդակներ է՝ որ ետևիցը սուալով, օղը ճղելով՝ զուր կորչում էին: Խեղմերն ստիպուած էին լինում յայտնի հայկոյանքը քամակիցն ուղարկելով՝ իրանց սիրտը հանգստացնել:

Մեր Խէջօյի քաջադրծութիւնները մի Յայմաւուրք կը լցնեն, բայց ես ուզում եմ նրա Հայրենասիրութիւնի մի օրինակն էլ պատմել, ծէրին կապ տալ:

Մի անգամ Խէջօն ընկերներին ուղարկում է կարաւան կտրելու և ինքը յետ է մնում: Երկու երեք օր անց է կացել, տղէքանց ոչ ձէնը կալ, ոչ իրանք: Զիու քամակն է թռչում, չոլն ընկնում:

Մի ձօրամիջում Խէջօն հեռուից իր ընկերների ձայնը լսում է: Ֆիծաղ, հանաքներ, հըռհըռոց, քռքռոց բարձրացել է իրան յայտնի մի այրի միջից:

Ուղղակի ձիու գլուխը դէպի այրն է դարձընում և զարմանում, թէ ի՞նչ է ընկերների անսովոր ուրախութեան պատճառը. դրանք երբէք իւր ներկայութեամբն էնքան ուրախ չեն եղել:

Մօտենում է այրին և մուտքի առաջին

վառած մեծ կրակի լուսով տեսնում է հեռուումն ընկած անդլուխ դիակը:

Յառաջ է գալիս մեր Խէջօն և նկատում, որ սպանուածի հաղինը հայ տէրտէրի փարաջայ է, իսկ մի կողմն ընկած է քահանայի գըլուխը՝ մօրուքը դէսկի երկինք ցցուած:

Հէնց էդ ժամանակն էլ այրի մէջից լսում է ընկերներից մէկի խօսքերը.

— Լաւ քէֆ արէք, տղէրք, էսօր մեր ագատօրն է, բռանս չափ հայն էստեղ չի, մեռանք առաջին մուկը դառնալով:

— Ի՞նչ անենք, որ մուկը չը դառնանք, պատախանում է մի երկրորդը, մեզանից աւելի կտրիճները փորձեր շատ արին, ուզեցան, որ առանց Խէջօյի բան տեսնեն, բայց որը կախաղանի վրայ քացի քացի անեղով շունչը փչեց, որն էլ Սիրուումը փթեց: Են մարդի վրայ սատանայի լվաճառեր (հմայութիւն) կալ, քանի իր հետ ենք, մի օր դատարկ ձեռքով չենք յետ դառել և ոչ բռնուել ենք:

— Վնաս չունի, մենք էլ իրա վրէժը կառնենք իր ազգից, վրայ բերեց մի ուրիշը, տա-

րեկան մի քանի տէրտէր կը մորթենք: Օխայ, առելացրեց նոյն աւազակը, ձեռքս որ չքցեցի տէրտէրի մօրուքն ու գլուխը կտրեցի, սրտիս վրայ մի թիզ իւղ կանգնեց:

— Հա, հա, հա, ձայն ձայնի տուին ամէքը:

Հէնց էս միջոցում խէջօն սուս ու փուս ներս է մտնում ու անխօս զլխավերևները կանգնում:

Աւազակները բոլորը պապանձուում են և դողալով տեղներիցը վեր կենում:

— Ապրի՞ք, տղէրք, խեղճ ժողովրդին քերթող մի տէրտէրի արևը մթնացրել էք, ասում է խէջօն, վաղուց մտքումս զրել էի սրա պէս մի քանիսին էն աշխարհքը զրկել, բայց չէր յաջողում, դուք իմ միտքս հասկացել էք:

Ասում է խէջօն և նստում:

Անցնում է մի քանի շաբաթ:

Մի օր Պարսկաստանում խէջօն տեսնում է, որ մի քանի սէյիդ, դավթիշ ու մոլլա ճանապարհովը զալիս են:

Խսկոյն նա հրամացում է իր ընկերներին, որ բոլորին ձորամէջը քշեն, մէկ մէկ մորթուտեն ու զլիներն իրար մօտ շարեն:

Ատամները կրծտելով, սրտերնին հուպ տալով՝ Խէջօյի ընկերներն իրանց հոգեորականներին սուրն են քաշում:

— Եթէ ձեր մորթած տէրտէրը մի զիւղի էր միայն վնաս տալի, ասում է խէջօն հեգնական ժպիտով, էս քաղցած գալերն և իրանց նմանները թուրք ու հայի զլուխ չեն թողում, ոտնատակ են տալիս: Որքան սրանցից շատ կոտորենք, ինչքան անզործ ու պարապ-սարապ, զիւղացու արիւնը տղրկի պէս ծծող սէյիդներին, դավթիշներին ու խարեբալ մօլլաներին շատ ուղարկենք ջանապահներ (դրախտը), էնքան մեր թափած արիւնների ծանրութիւնը մեր վղից կը թեթևանայ:

Ընկերները ոչ մի ձայն չեն հանում, հասկանում են, որ տէրտէրի վրէժն է առնում:

Իդ ճանապարհորդութիւնից վերադառնում է մեր խէջօն և իր ընկերներին հրաժարական տալիս: Նա չի ծածկում, յայտնում է, որ ինքը նրանց թշնամին է, յայտնում է, որ ինքը լըսել էր այրի զռան խօսակցութիւնը և թէ այսուհետեւ, եթէ խելք ունին, թող իրանցից հեռու ման դան, որովհետեւ երդուել է քահանայի

թափուած անմեղ արիւնով, որ մինչև բոլորին  
էլ չըբռնի ու արդարութեան ատենին չըմատ-  
նի, չի հանգստանալու: Մեր Խէջօն իր ուխտը  
կատարեց, առաջին գործն եղաւ տէրտէրին  
մորթողին ասպատակութեան ժամանակ բռնել  
և իր ձեռքով մորթել, զլուխը կտրել և դռնչը  
դէպի վերև դնել: Միւսներին էլ մէկ մէկ բռ-  
նեց և սիբիրական արեց:

Զը կարծէք, թէ Խէջօն նամարդի (ապի-  
կար) պէս իրանց տներումն էր բռնոտում. ոչ,  
նա ամէն մէկին չարազործութեան տեղումն էր  
վրայ հասնում, բռնում ու կռներն ետեւ իցը կապում:

Ի՞նչ եմ զլխացաւանք անում. մեր Խէջօյի  
մասին այժմ այսքանը հերիք է. եթէ մի օր  
ցամաք աչքով կարժանանանք ես ու մեր Խէ-  
ջօն միմեանց համբուրելու, հետը կերթամ նրանց  
այգին, թուղթ ու գլխէը մօտս կռնենամ, ծա-  
ռերի հոլումը կը նատենք, մի կօղմից ծառից  
ընկած պտողներն անուշ կանենք, միւս կող-  
մից թղթի երեսները կըսեացնենք:



16301

2013

